ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ԳԱՅԱՆԵ. Հրովարտակ-պայմանագրերը որպես հայ-արաբական հարաբերությունների աղբյուր VII–XII դդ., *Երևան, Մուղնի հրատ., 2017, 198 էջ:*

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը հրատարակել է արաբագետ Գայանե Մկրտումյանի “Հրովարտակ-պայմանագրերը որպես հայ արաբական հարաբերությունների աղբյուր VII–XII դդ.” արժեքավոր մենագրությունը, որը նոր լույս է սփռում պատմական մի շարք կարևոր հիմնահարցերի վրա:



Աշխատանքը, որը կատարվել է հիմնականում արաբերեն և հայերեն սկզբնաղբյուրների խորքային ուսումնասիրությամբ, կազմված է երեք գլխից: Դրանցից առաջինը վերնագրված է “Մուհամմադ մարգարեի վերաբերմունքը քրիստոնյաների նկատմամբ”, երկրորդը՝ “Դաշնագրերը՝ որպես հայ-արաբական հարաբերությունների աղբյուր” և երրորդը՝ “Առաջին չորս արդարադատ խալիֆաների օրոք նվաճված բնակչությանը տրված պայմանագրերը”:

Նշենք, որ անկախ հրովարտակ-պայմանագրերի (մանշուր), մասնավորապես, Մուհամմադ մարգարեի և Ալի իբն Աբու Տալիբ խալիֆայի անուններով դաշնագրերի պատմական վավերականության և իսկության իրողությունից, թեմայի ուսումնասիրությունը կարևոր է աղբյուրագիտության տեսանկյունից: Բացի այդ, այն հնարավորություն է տալիս հասկանալու Մերձավոր Արևելքում իսլամի ի հայտ բերած քաղաքական և քաղաքակրթական փոփոխությունները: Առանց նշված փաստաթղթերի ուսումնասիրության գրեթե անհնար կլինի ընկալել խալիֆայության մեջ մուսուլմանների և ոչ մուսուլմանների, մասնավորապես, քրիստոնյաների հարաբերությունների առանձնահատկությունները, ինչպես նաև՝ իսլամական օրենքների գերակայությամբ ապրող փոքրամասնությունների հիմնախնդիրները:

Գ. Մկրտումյանն օգտվել է Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի (Մատենադարանի) արաբատառ

պահոցում Մուհամմադ մարգարեի ու Ալի իբն Աբու Տալիբ խալիֆայի անուններով մեզ հասած և XVI–XIX դարերում ընդօրինակված բազմաթիվ դաշնագրերից: Դրանց նախատիպը Մուհամմադ մարգարեի կողմից 632 թ. Եմենի Նաջրան քաղաքի բնակչությանը տրված պայմանագրի "քրիստոնեական" տարբերակն է, որի կազմման ժամանակաշրջանը տատանվում է VII–IX դարերի միջակայքում: Մուհամմադյան պայմանագրերը, մասնավորապես, պահպանվել են Իբն Իսհակ-Իբն Հիշամի "Վարք մարգարեական" աշխատության մեջ: Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում և աշխատանքում ուսումնասիրվել են Մուհամմադ մարգարեին, Ալի իբն Աբու Տալիբի խալիֆային, Օմար իբն Ալ-Խատտաբ խալիֆային վերագրվող պայմանագրերը, որոնք շնորհվել են Երուսաղեմի հայ համայնքին: Հետագա պատմափուլերում մուսուլման կառավարիչների կողմից հայերին տրված բոլոր դաշնագրերը Երուսաղեմի հայոց համայնքին տրված պայմանագրի վերահաստատումն են: Ասվածի ապացույցն է նաև Սալահ ադ-դին Ալ-Այյուբիի (1171–1193) կողմից Երուսաղեմի քրիստոնյաներին, այդ թվում՝ հայերին շնորհված դաշնագիրը: Նշենք, որ հայերը նախքան իսլամի հաղթարշավը, V–VI դարերում Երուսաղեմում ունեցել են բազմաթիվ եկեղեցիներ: Քաղաք են այցելել հայ ուխտավորներ, վանականներ, ուսանողներ և այլն: Հեղինակն իրավացիորեն նշում է, որ ժամանակի ընթացքում մուհամմադյան դաշնագրերը դարձան հեղինակավոր և անկասելի չափանիշ հայերի նկատմամբ մուսուլման կառավարիչների կայուն դիրքորոշման ձևավորման համար:

Ժամանակագրական առումով աշխատության հիմնական նյութն ընդգրկում է VII դարի երկրորդ կեսից մինչև XII դարն ընկած ժամանակահատվածը, որը ներառում է առաջին չորս արդարադատ խալիֆաների, ինչպես նաև՝ Օմայան և Աբբասյան խալիֆայության շրջանը: Անդրադարձ է արվել նաև հետագա դարերին՝ մինչև XIX դարը, երբ հայերը, ապրելով իսլամական օրենքի ներքո, ձգտում էին Մուհամմադ մարգարեին վերագրվող դաշնագրով վերահաստատել իրենց կարգավիճակն իսլամական միջավայրում:

Դաշնագրերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ գլխահարկի ու հողահարկի վճարման դիմաց երաշխավորվում է քրիստոնյաների անվտանգությունը, ունեցվածքը, ապահովությունը, ինչպես նաև՝ դավանանքի ազատությունը: Մուհամմադյան դաշնագրերի ուսումնասիրությունը վկայում է քրիստոնյաների նկատմամբ որոշակիորեն հանդուրժողական ու մարդասիրական վերաբերմունքի մասին: Հետագայում դրանք դառնում են խալիֆայության կազմում ապրող նվաճված ժողովուրդների

հետ հարաբերվելու կարևոր ձևերից մեկը: Նշենք, որ մենագրության մեջ ուսումնասիրվել են նաև Ղուրանում և հադիսներում հրեաների ու քրիստոնյաների նկատմամբ իսլամի մոտեցումները:

Աշխատության մեջ Գ. Մկրտումյանը, փաստորեն, լայն քննության է ենթարկում մանշուրի ինստիտուտը ("Ալի մանշուր", "Մեծ մանշուր", "Փոքր մանշուր")՝ որպես քրիստոնյա-մուսուլմանական հարաբերությունները քաղաքական, տնտեսական, կրոնական, մշակութային ոլորտներում կարգավորող կարևոր գործոն: Սկսած XII դարից՝ հայկական միջնադարյան մատենագրության մեջ բազմիցս հիշատակվում են "Մեծ" և "Փոքր" մանշուրները: Հեղինակը նշում է, որ չնայած "Մեծ մանշուրը" ուղղակիորեն վերագրվել է Մուհամմադ մարգարեին, այն VII դարի վերջին և VIII դարի սկզբին հայերին շնորհել է Օմայան զորավար Մուհամմադ իբն Մրվանը: Վերջինիս պետք է վերագրել նաև "Փոքր մանշուրը": - Մինչդեռ "Մեծ մանշուրի" կետերն ամրագրում են իսլամական իշխանության հաստատումը Հայաստանում, որտեղ 701 թ. ձևավորվեց էմիրություն՝ Արմինիա անվամբ (հայտնի է նաև Արմինիայի ոստիկանություն անունով), որտեղ հայ ազնվականությունը (նախարարներ) պահպանեց իր որոշակի դիրքը: Այս հանգամանքը հետագայում հիմք դարձավ հայոց անկախ պետության՝ Բագրատունյաց Հայաստանի ստեղծման համար:

Հարկ է նկատի ունենալ, որ խալիֆաների կողմից քրիստոնյա բնակչությանը շնորհված դաշնագրերը մեզանում համապարփակ ուսումնասիրության չեն արժանացել: Խնդիրը հիմնականում ուսումնասիրվել է, ինչպես նշում է հեղինակը, միջնադարագետներ Հ. Անասյանի, Հ. Փափազյանի և Ա. Տեր-Ղևոնդյանի կողմից, որոնց ջանքերով գիտական շրջանառության մեջ են դրվել մի շարք պայմանագրեր: Հիշարժան են նաև Բ. Խալաթյանցի և Հ. Նալբանդյանի՝ իսլամական աղբյուրներից քաղած թարգմանությունները: Այս տեսանկյունից կարևոր նշանակություն ունի, մասնավորապես, արևելագետ, պրոֆեսոր Սեդա Դադոյանի "Հայերը միջնադարյան իսլամական աշխարհում: Փոխառնչության օրինակներ յոթից մինչև տասնչորսերորդ դարերը" (ԱՄՆ, 2011) մենագրության առաջին հատորը, որտեղ քննարկվում են դաշնագրերը, հրովարտակները, խաղաղության պայմանագրերը՝ որպես մուսուլմանների և ոչ մուսուլմանների հարաբերությունների կարգավորման իրավական հենք: Ինչպես նշում է Գ. Մկրտումյանը, Մուհամմադ մարգարեի անունով քրիստոնյա համայնքներին, այդ թվում հայերին տրված պայմանագրերը եղել են նաև մուսուլման հետազոտողների ուշադրության կենտրոնում:

Վերոհիշյալ պայմանագրերի այդպիսի մի խումբ ներկայացրել և ուսումնասիրել է Մուհամմադ Համիդալլահը:

Հարցի քննությունը ի ցույց է դնում, որ հայերի պատմությունը VII դարից ի վեր առնչվում է իսլամական աշխարհի և Մերձավոր Արևելքի պատմությանը: Փոխառնչությունների բազմաթիվ օրինակները փաստում են, որ հայերն իսլամական աշխարհի հետ հարաբերվելու մեծ փորձառություն ունեն և մերձավորարևելյան խճանկարի կարևոր բաղկացուցիչներից մեկն են: Իսկ ահա X դարից ի վեր, արտագաղթի և պատմական հայրենիքում ինքնիշխանության կորստից հետո, ամրապնդելով իրենց դիրքերը Մերձավոր Արևելքում, հայերը դառնում են կարևորագույն գործոն քաղաքական, ռազմական, սոցիալ-տնտեսական և մշակութային ոլորտներում:

Հայաստանի միջնադարյան պատմությունը թե՛ ավանդական պատմական հայրենիքում, թե՛ նրա սահմաններից դուրս, Մերձավոր Արևելքի հետ փոխառնչությունների ու համագործակցության պատմությունն է, որը շատ դեպքերում կարգավորվել է իսլամական իրավական նորմերով և նշված դաշնագրերով: Միանգամայն ճիշտ է դաշնագրերի ուսումնասիրությունը համարել հայ-իսլամական հարաբերությունների կարևորագույն աղբյուր:

Ամփոփելով մեր խոսքը՝ նշենք. Գ. Մկրտումյանի մենագրությունը կարևոր ներդրում է հայրենական արևելագիտության մեջ: Այն աչքի է ընկնում գիտական արդիականությամբ, ինչպես նաև՝ քաղաքական նշանակությամբ, եթե նկատի ունենանք, որ Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ միջինարևելյան ուղղությունը կարևոր նշանակություն ունի: Գրքի խմբագիրը պ. գ. դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արաբագետ Նիկոլայ Հովհաննիսյանն է: Ուսումնասիրությունն իրականացնելիս հեղինակին մեծապես աջակցել են արևելագետներ Ա. Կոզմոյանը, Հ. Ժամկոչյանը, Վ. Տեր-Ղևոնդյանը և Ե. Մինասյանը:

ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ